ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 125-Ն

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 18.10.2019ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 107-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒՆ, 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԱՎԵԼԱՑՈՒՄ ԵՎ ՀՈԴՎԱԾԱՅԻՆ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի պահանջներով, Արենի համայնքի ավագանին *որոշում է*՝

Տալ համաձայնություն

1. Արենի համայնքի ավագանու 18.10.2019թվականի <<Արենի համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեում հոդվածային վերաբաշխումներ կատարելուն, բյուջեի եկամտային մասը ավելացնելուն եվ վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե գումար հատկացնելուն համաձայնություն տալու մասին>> թիվ 107-Ն որոշման.

ա) 2-րդ մասի մեջ <<39 453 900(երեսունինը միլիոն չորս հարյուր հիսուներեք հազար ինը հարյուր)>> բառերը և թվերը փոխարինել <<33 453 900(երեսուներեք միլիոն չորս հարյուր հիսուներեք հազար ինը հարյուր)>> բառերով և թվերով,

բ) 3-րդ մասի մեջ <<24միլիոն>> բառերը և թվերը փոխարինել <<քսանչորս միլիոն>> բառերով,

գ) 4-րդ մասի մեջ <<63453900 (վաթսուներեք միլիոն չորս հարյուր հիսուներեք հազար ինը հարյուր)>> բառերը և թվերը փոխարինել <<57 453 900 (հիսունյոթ միլիոն չորս հարյուր հիսուներեք հազար ինը հարյուր)>> բառերով և թվերով,

դ) 4-րդ մասի <<ա)>> ենթակետի մեջ <<63միլիոն>> բառերը և թվերը փոխարինել <<հիսունյոթ միլիոն>> բառերով,

ե) 6-րդ մասի մեջ <<1.5միլիոն>> բառերը և թվերը փոխարինել <<1 500 000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար)>> բառերով և թվերով,

գ) 7-րդ մասի մեջ <<150հազար>> բառերը և թվերը փոխարինել <<150 000 (մեկ հարյուր հիսուն հազար) >> բառերով և թվերով

2. Արենի համայնքի 2019թվականի տարեկան բյուջեի եկամտային մասի՝ Արենի հողի օտարումից մուտքեր գործառնական դասակարգման 29 բաժնի, 50 խմբի, 00 դասի եկամտատեսակում ավելացնել 2 600 000(երկու միլիոն վեց հարյուր հազար) << դրամ:

3. Ֆոնդային բյուջեում ավելացված 2 600 000(երկու միլիոն վեց հարյուր հազար) << դրամը ուղղել կեղտաջրերի հեռացում գործառնական դասակարգման 05 բաժնի 02 խմբի 01 դասի 5112(շենքերի և շինությունների շինարարություն) հոդվածին:

4. Ճանապարհային տրանսպորտ գործառնական դասակարգման 04 բաժնի 05 խմբի 01 դասի 5113(շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) հոդվածից պակասեցնել 1 179 000(մեկ միլիոն մեկ հարյուր յոթանասունինը հազար) << դրամ և ուղղել.

ա) կեղտաջրերի հեռացում գործառնական դասակարգման 05 բաժնի 02 խմբի 01 դասի 5112(շենքերի և շինությունների կառուցում) հոդվածին՝ 424 000 (չորս հարյուր քսանչորս հազար) << դրամ,

բ) Զրամատակարարում գործառնական դասակարգման 06 բաժնի 03 խմբի 01 դասի 5113 (շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) հոդվածին՝ 755 000 (յոթ հարյուր հիսունհինգ հազար) << դրամ:

5. Արենիի համայնքապետարանի պահուստային ֆոնդ գործառնական դասակարգման 11 բաժնի 01 խմբի 02 դասի 4891 (պահուստային միջոցներ) հոդվածից պակասեցնել վեց միլիոն << դրամ և ուղղել.

ա) կառավարման մարմնի պահպանում գործառնական դասակարգման 01 բաժնի 01 խմբի 01 դասի. 4252(մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում) հոդվածին 200 000(երկու հարյուր հազար) << դրամ, 4822 (այլ հարկեր) հոդվածին 100 000 (մեկ հարյուր հազար) << դրամ,

բ) ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ գործառնական դասակարգման 01 բաժնի 06 խմբի 01 դասի. 4241 (մասնագիտական ծառայություններ) հոդվածին 600 000 (վեց հարյուր հազար) << դրամ, 4657 (այլ կապիտալ դրամաշնորհներ) հոդվածին՝ 2 815 000 (երկու միլիոն ութ հարյուր տասնհինգ հազար) << դրամ, 4637 (ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածին՝ 605 000 (վեց հարյուր հինգ հազար) << դրամ:

գ) կեղտաջրերի հեռացում գործառնական դասակարգման 05 բաժնի 02 խմբի 01 դասի 4637(ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածին՝ 350 000 (երեք հարյուր հիսուն հազար) << դրամ,

դ) ոռոգում գործառնական դասակարգման 04 բաժնի 02 խմբի 04 դասի 4637 (ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածին՝ 80 000 (ութսուն հազար) << դրամ,

ե) Զրամատակարարում գործառնական դասակարգման 06 բաժնի 03 խմբի 01 դասի 4637 (ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածին՝ 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) << դրամ,

զ) Ճանապարհային տրանսպորտ գործառնական դասակարգման 04 բաժնի 05 խմբի 01 դասի 4637 (ընթացիկ դրամաշնորհներ

պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածին՝
000 000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՁԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ